### ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի որոշ հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանս-քննարկում

**28.06.2013 13:13**

Հարգելի' փաստաբաններ,

ՀՀ փաստաբանական դպրոցը հրավիրում է մասնակցելու **ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի որոշ հիմնախնդիրներին** նվիրված կոնֆերանս-քննարկմանը:

Զեկույցի թեմաներն են՝
1. «Պաշտպանը որպես ապացույց ձեռք բերող սուբյեկտ»-Նիկոլայ Բաղդասարյան (ՓՊ անդամ, ՓՊ խորհրդի անդամ, ՓԴ տնօրեն)

2. «Մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացնելը»- Լուսինե Սահակյան (ՓՊ անդամ, ՓՊ խորհրդի անդամ, «Բագին» փաստաբանական գրասենյակի փաստաբան)

3. «Ցուցմունքների դատական դեպոնացումը»-Արթուր Ղամբարյան (ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և ինտեգրման բաժնի պետ, դոցենտ)

4. «Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման դեպքում հիմնավորում չպահանջելը»-Երվանդ Վարոսյան (ՓՊ անդամ, «Բագին» փաստաբանական գրասենյակի փաստաբան)

***<u>Կոնֆերանսը տեղի կունենա 2013 թվականի հուլիսի 13-ին (ժամը 11:00-15:00), «Անի պլազա» հյուրանոցային համալիրի «Գառնի» սրահում (հասցե' ք. Երևան, Սայաթ-Նովայի պողոտա, 19 շենք):</u>***
***<u>Գրանցվելու համար զանգահարել (+37410) 204093 հեռախոսահամարով կամ ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություն Coordinat.training@advschool.am էլեկտրոնային հասցեին:</u>***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })